

ԳԵՂԱՐՒԵՍՄԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ-ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԹԱՓԹՈՒՐԹ

№ 23 կիրակի 21 յունիսի | երրորդ տարի | 1892

Աղբիւրի տարեկան բաժանորդագինն է 3—28 կ. իսկ Տարագինը 6 րուբլի. առանձին Ն-ը 25 կ. Հասցէն. Тифлисъ, Редакція иллюстр. журн. Агбюръ կամ Таразъ իսկ արտասահմանից՝ Tiflis-Caucase, Rédaction des jour. illustrés Agbur կամ Taraz.

Շարունակւում է ներկայ 1892 թուականի բաժանորդագրութիւնը պատկերազարդ ԱՂԲԻՒՐ ամսագրի եւ ՏԱՐԱԶ շաբաթաթերթի:

ՏԷՐ ՍՏԵՓԱՆՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

ԱՌԱՋՆՈՐԴ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ

Արքպատականը կոչւում էր Աբոտագու-վիճակ, որի աթոռանիստը Թաւրէզ Առաքեալի վանքումն էր նստում Մակուայ խանութեան մէջ: Քաղաքական հանգամանքները փոխադրեցին Արտագու առաջնորդներին վերջին դարերում Դաւրէժ Շահաստանը՝ աւելի եւս մօտ յարաբերութեամբ գործելու յոգուտ հօտին:

Նախկին եկեղեցական վիճակաւորութիւնը՝ զուտ կրօնական պահանջ ունէր: Վերջին առաջնորդութիւնը՝ որ ստացել է „Խալիֆա եւ Մելթ-բաշի“ կոչումը՝ ունի միանգամայն կրօնական եւ քաղաքական իրաւունքներ. եւ այս առաւել այժմ՝ Պարսկաստանում:

Այսպիսի վիճակի առաջնորդութեան աթոռի վրայ է նստած այն Ստեփանոս Սրբազանը:

Նա այժմ 50 տարեկան է. ծնել է Ալէքսանդրապօլում. 1857 թ. մտել է Էջմիածնի ժառանգաւորաց դպրոցը: 1864-ին ձեռնադրւում է աբեղայ եւ ստանում է Էջմիածնի տնտեսութեան պաշտօն:

Գէորգ Դ-րդ կաթողիկոսը ծայրագոյն վարդապետութիւն տալով՝ կարգում է նրան Էջմիածնի ծախսարար եւ միեւնոյն ժամանակ պաշտօնեայ կաթողիկոսական աւանդին յանձնարարութիւնների եւ քննիչ վիճակային գործերի:

Ցետոյ կարգւում է յաջորդ Հ. Նախիջեւանու, ուր երկու տարի գործելով, նախ բարեկարգում է դպրոցները, հիմնարկում է նոյն քաղաքում Ս. Գէորգ եկեղեցին: 1872—76 վարում է Տաթեւի յաջորդութիւնը:

1877 թ. կաթողիկոսը ուղարկում է Բեսարաբիա կաւլաձոց կառավարիչ:

Գէորգ կաթողիկոսը 1882 թւին նրան եպիսկոպոս ձեռնադրեց, իսկ Մակար կաթողիկոսը 1886 թ. նշանակեց նրան Արտպատականի առաջնորդ:

Սրբազանը ստացել է ակնառուն խոհ եւ պնակէ եպիսկոպոսական. ստացել է Վ. Շահից I եւ II աստիճանի „Շիրը Խուշիդը“. ունի եւ թանգագին մատանի ընծայ՝ մեծ իշխան Ն. Նիկոլաեւիչից, 1877 թ. զօրքին Քիշնեւից անց ու դարձին օգնութիւն տալու համար:

Ս. Մխիթարեանցը ունի տպած երեք գործեր. 1. „Պատմութիւն այբ վանուց“, 2. „Հոգեբա-

նուԹիւն“ եւ 3 „ՏորագրուԹիւն Ս. Գէորգայ վանուց“։

Անտիպներ են.

1 „ՊատմուԹիւն Սիւնեաց Հանգերձ աշխարհագրական տեղեկուԹեամբ“.
2 „ՊատմուԹիւն ԿաԹողիկոսաց ի Ղուկասէ ցՄակար“.
3 „ՎարքագրուԹիւն Սինօդական անդամոց և գործող անձանց Էջմիածնի“.
4 „Ներքին տղեաք Էջմիածնի“.
5 „ՏորագրուԹիւն Խոր Վիրապ Վանուց“.
6 „Գրիգորեանական ՎարդապետուԹիւն և ՎիճաբանուԹիւն առաքելոց“։

Այս Սրբազանը Դավրիժում հիմնեց առաջին հայ տպարանը եւ իր ժիր գործունէուԹեամբ վայելում է համայն իր հօտի լիակատար սէրը։

ՀԻՆ ԽՈՑԵՐ

ՊԱՏՄԱԿԱՆ ՂՊՊԻ

I

Լուսինը՝ հանդարտ լողալով ամպերի միջից և ժպտելով իր վերջին տօթ լոյսը Քամիրու սարի ձիւնապատ կատարից, լռութեան հորիզոնի տակ։ Սև քողը սրտաբեւ երկրիս վրայ և մռայլեց շուրջը. գիշերային խաւարը՝ գրկելով ողջ բնութիւնն՝ քանի գնում էր, այնքան Թանձրանում էր։ Մինչև անգամ տեղ-տեղ երևացող աստղերն էլ տալիս իրանց հրաժարականը։ Որիոն յուռութիւն էր տրտնում. միայն չատ հեռուից լսւում էր Ածքսի կատաղած յորձանքների մեղեդին, որ կարծես օրօր էր խաղաղ գիշերին։ Գիշերապահ այս միաԹեան մէջ նշմարւում էին մի քանի շարժուղ սև բծեր, որոնք ընԹանում էին դէպի Կանգլաղ սարը։ Նրանց միջից լսեցաւ մի աղիողորմ մանկական ձայն,

—Յոգնել եմ, մայրիկ...

—Սուս կաց, բալա, հիմա տեղ կը հասնենք, ասաց մայրը։

Յանկարծ մօտակայ բլրի տակից լսեցան հրացանի դղրդիւնները. սև բծերը ահից կուչ եկան քարափների խոռոչներում։ Մի քանի րոպէից յետոյ երևեցան մի խումբ ձիաւորներ, որոնք օտարազգի երգերով Թնդացնում էին շրջակայ անդորրութիւնը։

—Մինաս ախպեր, այտտեղերը չէ՞մ ես, հարցրեց Նրանցից մէկը։

—Օ՜, իմ գործը այս տեղերում է կորել, ինչպէս չըլինէր. ահա տեսնում ես այն սև ու բարձր բաները... դէպի աջ նայիր...

—Ո՞րը... այո՛, այո՛...

—Այդ Ղազի-աղբիւրի ուռի ծառերն են. շարունակեց Մինասը. դրանց տակն է այն ուտպանը, որի մէջ ես երեկոյ ժամանակս ամեն օր լողանում էի։

—Տեսնենք ինչ է կենդանին մնացել մեզանից յետոյ. ընդհատեց մի ուրիշը։

Այդ ձիաւորները Ագուլեցիք էին. նրանք վերադառնում էին տուն բազմամեայ պանդխտութիւնից յետոյ։ Նրանք՝ Թողնելով իրանց ընտանիքը, տուն ու տեղը, հեռացել էին հայրենիքից և զանազան հեռու երկրներում վաճառականութեամբ էին պարապում։ Ագուլեցի վաճառականները մինչև անգամ մի քանի տասնեակ տարիներ՝ հարստութեան յետևից ընկած՝ Թափառում էին Պարսկաստանի, Հնդկաստանի և ուրիշ աչքութիւնների քաղաքներում։ Կարծես սրանց էլ նոյնպէս վիճակած է Թափառել աշխարհից աշխարհ և ցրուել իրանց հայրենիքից, ինչպէս հրէաներին։ Հին ժամանակներում վաստակին հաղորդակցութիւնները չըլինելու պատճառով, երբ որ շատ սակաւ էր պատահում, որ մի լուր էին տանում իրանց ընտանիքի և առհասարակ ծննդավայրի մասին. եթէ պատահում էր, այն էլ նոր գնացած վաճառականները չնորհիւ էր լինում։ Քանի քանի անգամ նրանք վերադարձել են հայրենիք և տեսել են մեռած կամ կինը, կամ որդին և կամ շատ անգամ զառամեալ ծնողքը։ Երևակայեցէք այն կնոջ դրութիւնը, որն ամուսնութեան „մեղրի ամսում“ ընծայուում է իր ամուսնուց և ոչ ամեն անգամ, երբ մի որ և իցէ վաճառական վերադառնում էր հայրենիք, արտասուքը աչքերին հարց ու փորձ է անում. „Նրան չե՞ս տեսել... Ինչպէս է նրա առողջութիւնը... վերադառնալու միտք չունի“... Շատ անգամ կինը երկար սպասելուց յետոյ, լսելով իր ամուսնու մահուան բօթը, կրկին տխրասած էր լինում ուրիշի հետ պսակուելու։ Այդ երևոյթի չար հետքերը մինչև այժմ էլ գոյութիւն ունէին։ Բայց ներկայումս շատ ինտելիգենտ գոկերը, հպարտանալով այն ամեն չարիքը, որ կարող են պատահել նրանց անտէրը և անընդմէջ Թողած ընտանիքի հետ, վաճառում են հայրենի տունն ու կալւածները և ընտանիքով գաղԹում հն այն քաղաքը, որտեղ իրանք վաճառականութեամբ հն պարապուում։ Դրանով հետզհետէ Ագուլիսի բնակիչների Թիւը փոքրանում է ամեն տարի։ Հին ժամանակները, երբ այդ վաճառականները երկար տարիներից յետոյ վերադառնում էին հայրենիք, դեռ Ագուլիսի մէջ չըմտած, հրացաններ էին արձակում, որ այդպիսով լսող տան բնակիչներին քարվանի վերադարձը։

Մեր յիշած մի խումբ ձիաւորները նրանցից էին։ Գարուի խոռոչներում Թաղնւածները, լսելով հայերէն խօսակցութիւն, ուղղեցին իրանց քայլերը դէպի ձիաւորները, որոնցից մէկը՝ նկատելով մօտեցող սև բծերը, զարհուրած՝ զգուշացրեց իր ընկերներին և ձայն տւեց։

—Ա, քո՛մ սան, վուրդում... (ով ես, խմեցը)։ Բոլորը հրացանների ոտը բարձրացրին։

—Օ՜ խզճայի՛ք... հայ ենք, հայ։ Բոլորը հանգստացան և ցած Թողնելով հրացանների ոտը՝ հետաքրքրւած կանգնեցին։

—Ո՞վ էք դուք և ինչ գիշերին ինչ էք անում դուք այստեղ, հարցրեց Մինասը։

—Նախիջևանցի ենք և գնում ենք Ագուլիս։

Ձիաւորները արդէն հասկանալով ամեն բան՝ սկսեցին շարունակել իրանց ճանապարհը։ Թէպէտ Նրանք ճանապարհին շատ էին տեսել սրանց նմաններին, բայց Մինասը դարձեալ պահեց իր ձիու վիզը և հարցրեց.

—Ներէք, վաճառականներից էք։

—Այո՛, աղա... բայց Բրնստոսի սերոյն համաբ ինդրում եմ օգնեցէք մեզ, որպիս տատիկ յոգնել է, ասաց Նախիջևանցիներից մէկը։ Մինասը այդ որ լսեց,

խոյն յետ կանչեց իր ընկերներին, որոնք քիչ հեռացել էին, և իր ձիու գլուխն վրայ նստացրեց յոգնած մանկանը, իսկ նրա ձնռոյց տեղաւորեցին ընկերների ձիու վրայ։

Հոլիզոնը սկսել էր հետզհետէ կարմրիլ, երբ մեր վաճառականները մտան Ագուլիս։

II

Թերթելով Առաքել Դավրիժեցու պատմութիւնը, մենք ցաւօք սրտի կարդում ենք նրա էջերի մէջ Հայոց հոգևորականութեան խարխուլ և ընկած դրութիւնը XVI դարում, երբ Սուրբ Էջմիածնի Հայրապետական աթոռը կռւտածաղիկ էր դարձել ագահ և վատասոյզ կաթողիկոսների ձեռքին, որոնք՝ կաշառելով Պարսից թագաւորին՝ ձեռք էին բերում կաթողիկոսական իշխանութիւնը. այն իշխանութիւնը՝ որը երբև Լուսաւորչի մեկ ժառանգութիւն՝ վսեմանակ մէկ լինելու, բաժանած էր երեք-չորս հակաթոռ հայրապետութիւններին։ Եթէ կաթողիկոսական Աթոռը այսպէս ծախւում էր արծաթով և սրբապղծւում էր անարժան յոյզողներով, ուրեմն դժւար չէ երևակայել Հայոց միաբաններին և քահանաների ընկած դրութիւնը։

Բոլոր հոգևորականները այն ժամանակ աւելի աշխատում էին իրանց վիզը հաստացնել և փորը տիրեւ. նրանք աւելի պաշտում էին իրանց մարմնի հաճոյքներին, քան Թէ հոգուն. նրանք, որոնց յանձնւած էր հօտերի ծանը և վսեմ հովւութիւնը, նիւթապաշտութեան գերի էին դարձել։ Վանքերը և եկեղեցիները, զրկւած զարդերից և սուրբ անօթներից, որոնց յափշտակել էին այզագլիքը, մնացել էին ամայի և դարձել էին խոզերի քնակարան. վոխանակ ժամերգութեան և լռիկ անոյշ բուրմունքի, նրանց մէջ լսւում էր խոզերի ճղճղոց և ազբի գարշահոտութիւն։

Այդ ընդհանուր գարշահոտութեան ժամանակ եւ մի բարեպաշտ և առաքինի վարդապետ Մովսէս անունով, որ յետոյ կաթողիկոսական պաշտօն ստանալով, վերականգնեց Հայկական սուրբ Աթոռը։

Մովսէսը Սիւնեաց աշխարհի Խոտանան գիւղից էր։ Նա տասն և հինգ տարեկան հասակում արեզայ ձեռնադրեցաւ և աշակերտութեան յանձնեցաւ Կեսարիայի Գրիգոր վարդապետի մօտ, որը սովորեցրեց նրան դպրութիւն և տւեց բազմակողմանի տեղեկութիւններ Հայոց կրօնի վերաբերեալ։ Մովսէսը Գրիգոր վարդապետից կրօնք խնդրելով, գնաց ուխտ Սրուանդէմ, որտեղից գնաց Եղևնատոս. այստեղ ծանօթանալով շատ վանքերի միաբանութիւնների հետ, ուսումնասիրեց հոգևորականների բուն կանոններն ու կարգերը և վերադարձաւ կրկին Ս. լուսաւէմ։ Այդ ժամանակ Գրիգոր վարդապետը Թագաւորական հրամանով պատրաստւած էր նշանակւած Կոստանդնուպօլսում։ Մովսէսը քիչ ժամանակից յետոյ եկաւ իր ուսուցչի մօտ, որին իր սրբակրօնութեամբ և պարկեշտ վարքով սկսւել դարձաւ։ Նա գրաւեց մինչև անգամ բոլոր ժողովրդին։ Դողթենեցի և Ջուղայեցի վանահայրերը, պատուհասելով Մովսէսին Կոստանդնուպօլսում, խնդրեցին Գրիգոր վարդապետին, որ նրան քարոզելու իրաւունք տայ։ Մի քանի տարուց յետոյ Մովսէսը վարդապետութեան և ազատ քարոզչի պաշտօն ստանալով՝ եկաւ իր հայրենիքի Տաթևայ վանքը, որտեղ իր տաք քարոզնեղի մէջ սկսեց մերկացնել վանքի միաբանների պակասութիւնները և հոգին. նրանք չկարողացան տանել այդ յանդիմանութիւնները և թողնելով վանքը, հեռացան այնտեղից։

Մովսէս վարդապետը Տաթևից գնաց շրջակայ գաւառները և սկսեց քարոզել ամեն տեղ Աստուծոյ Աւետարանը, հիմնելով մինչևնոյն ժամանակ դպրոցները ապագայ հոգևորականները պատրաստելու համար։

Ագուլիսի Թովմա առաքեալի վանքումն էլ հիմնեց մի դպրոց, ուր ժողովւեցան շատ աշակերտներ, որոնց ծախքը և պէտքերը ինքն էր հոգում։

Ահա, այդ ժամանակն էր, որ Պարսից Շահ-Աբաս Թագաւորը մեծ զօրքով մտել էր Հայաստան և ամեն բան սրի ճարակ էր անում։ Հայերը, տեսնելով նրա օձային բնութիւնը, ամեն տեղ հարուստ ընծաներ առաջարկելով, անձնատուր էին լինում մահմեդականներին և դիմելիքն էին խնդրում նրանցից։ Պարսից Թագաւորը առանց մեծ դժւարութիւնների խլեց օսմանցիներից Ա. րտրատեան և շատ ուրիշ երկիրները և ժողովրդին մի քանի անգամ մեծ կոտորած և աննկարագրելի նեղութիւններ տալով՝ քշեց Պարսկաստան։ Բայց դրանից Շահ-Աբասը շատ գիւղեր և քաղաքներ իր սրբավայրերով յանձնեց կրակին. իսկ նրա աւազանները ոչ միայն հալածում էին քրիստոնէութիւնը, այլև ինքնակամ նեղում էին հայերին, ամեն մի չնչին քանի համար տուգանք էին պահանջում, խլում էին նրանց սերունդների գլխից նրանց հաւանած օրիորդին և անմեղ մանուկներին։ Այս պատճառով շատերը, վախչելով զանազան կողմեր, ապաստանում էին Շահ-Աբասի մարզկանց ձիրաններից։

Նախիջևանի առնելուց յետոյ, նրա բնակիչներից մի քանիսը վախան Ագուլիս։ Այն գիշերւայ Ագուլեցի վաճառականներին, որոնք օգնեցին մի վախչող ընտանեքին, արդէն յայտնի էր Նախիջևանի առնելը և նրա բնակիչներից շատերի ցիրուցան լինելը։

III

Ագուլիսից մի քանի վերստ հեռու գտնւում է Ցղնա գիւղը։ Այսօր գիւղի բոլոր անասնի մարդիկ հաւաքւել են Խօջա Անձրևի տանը և խորհուրդ են անում Շահ-Աբասին ընդունելու մասին։ Պարսից Թագաւորի բարբարոսութիւնների բօթն արդէն հասել էր այստեղ։ Ամբողջ Ցղնայի բնակիչները Թէ այր, Թէ կին, Թէ մեծ և Թէ փոքր սարսափած սպասում էին այն օրհասական ժամին, երբ մահմեդական Թագաւորը ալիսի հրգեհէր ողջ գիւղը իր եկեղեցիով և եկեղեցականների մարմինը ալիսի խորովէր խարոյկի վրայ։ Խորհուրդը վերջանալուց յետոյ ամենքը գնացին եկեղեցի և ջերմագին աղօթքներ էին բարձրացնում Աստծուն, որ Նա սիրէ իր ողորմութիւնը բոլոր քրիստոնեաների վրայ և գուէթ գոչ մահմեդականների սիրտը։ Քահանան սկսեց մի քարոզ, որի մէջ նկարագրում էր այն բոլոր չարիքը, որոնք գարերի ընթացքում խորտակել են Հայոց ոյժը և զօրութիւնը։ Նա սայծառ գոյներով նկարագրում էր ազգի այն գործիչներին, որոնք նրանց արիւնը Թափել են եկեղեցին, ազգը անկախ պահելու համար. նա ժողովրդի ուշադրութիւնը դարձրեց այն հանգամանքի վրայ, Թէ ինչպէս Լուսաւորչական հաւատը, չընայելով իր բազմամեայ հալածանքներին, մինչև այժմ մնացել է տիրուն և հաստատ. Թէ ինչպէս հայերը՝

կորցնելով ամեն բան, մնացել են հաւատարիմ իրանց միակ սեպհականութեան—եկեղեցուն։ Նորընծայ քահանան, որը կրթուած էր Մովսէս վարդապետի մօտ և գիտէը բոլոր անցեալը, իր ամեն մի խօսքը ցցում էր ժողովրդի սրտում. նա իր խելացի բացատրութիւններով և ոգևորիչ օրինակներով ժողովրդին դարձրել էր մի մարմնացած ուշադրութիւն։

Միւս առաւօտեան, երբ արևելքը սկսել էր շառագունել և արեգակի ճառագիները սկսել էին հալածել հորիզոնի մշուշները, Ագա գիւղի մօտով հերթ-հերթ ձիաւորներ, անգադար մտրակելով իրանց ձիաներին, կայծակի նման առաջ էին սլանում, հետքից թողնելով մոխրագոյն փոշի։ Նրանք չուտով հասան Ցղնա գիւղը և անյայտացան ծառաստանի մէջ։ Փիլ յետոյ լսեցան թմբուկների և շեփորների ձայները, որոնք միախառնելով խառնիխուռն աղաղակների և ձիաների ձայների հետ, թնդացնում էին շուրջը, արձագանք սփռելով մինչև Իլան-դաշը։ Շրջակայ դարափոսները սկսացել էին մարգկանցով, որոնց վրայ թանձր փոշու միջից շողշողում էին զէնքերը արևի ճառագայթների տակ։ Խօջա Անձրևը բոլոր գիւղի բնակիչներով դուրս եկաւ ընդունելու Պարսից թագաւորին։

Շահ-Աբասը դժուարին ժպիտով սկսեց առաջ քայլել իր ոտների տակ տարածած մետաքսէ գորգերի վրայով, մինչդեռ ժամանակ բազէի նման յառելով իր աչքերը ամբոխի մատուցահասների վրայ։ Այդպիսի վառուռ ընդունելութիւն թագաւորի համար սովորական էր։ Նա, մանելով Անձրևի տունը, հպարտութեամբ բազմեց պատրաստած դահլիճի ճակատին. իսկ նրա շուրջը նստեցին կարգով բոլոր նախարարները և աւագանիքը, որոնցից իւրաքանչիւրն իր պատուհին և մեծութեան համեմատ տեղ բռնեց։

Դահլիճի յատակը պատած էր գոյնզգոյն մետաքսէ գորգերով, որոնց վրայ, դէպի պատի կողմը, կարգով փռուած էին թանգագին կակուղ դոշակները, սրանց վրայ տեղ-տեղ պսպղում էին թաւչեայ մուշտակների ոսկէ ժապաւէնները իրանց վիզերով։ Դահլիճի մէջ տեղում, յատակի վրայ կարգով շարուած էին մեծ սկիներ, լի քաղցրաւէնիներով և անուշ պտուղներով։ Խօջա Անձրևը ոտքի վրայ սպասաւորութիւն էր անում շահին Ճաշի ժամանակ։ Յետոյ ներս մատաւ նրա կինը ձեռքին բռնած մի մատուցարան, որի մէջ ժպտում էր շահի երեսին ոսկու հալարտ և շողշողուն կոյսը. նա մօտեցաւ թագաւորին, չոքեց նրա առաջ և լռնարհութեամբ դրեց մատուցարանը աչքերը չորս դառած մահմեդականի առաջ։ Շահ-Աբասը, մեքենայաբար ծածկելով իր չահասիրական ուրախութիւնը, շնորհակալութիւն յայտնեց և ասաց Անձրևի կնոջ.

—Ի՞նչ դահմաթ (նեղութիւն) ես քաշում։

Խօջա Անձրևը սիրտ առնելով ասաց.

—Թագաւորն ապրած կենայ, այդ բոլորովին պահմաթ չէ մեզ համար, քանի որ քո մեծութիւնը արժանի համարեց իր ծառայի տանը մի կտոր ազու հաց վայելելու։

—Մաշալլա՛հ, Խօջա Անձրև, բարաքեայլա՛... սրանից յետոյ քո կինը ոչ թէ իմ հպատակն է, այլ իմ մայրն է, ասաց Թագաւորը։ Նա հրամայելով իր գանձապահին վերցնել ոսկիները՝ ընդունեց մի մանկահասակ տղայից պատրաստած դայլանը և թեք ընկնելով մուշտակի վրայ՝ սկսեց պղպջացնել, խորովակի երկու կողքերից արձակելով կապոյտ ծխի քուլաները, որոնք տարածւելով օդի մէջ՝ անյայտանում էին լուսամուտների ճեղքերում. մէկ կողքը ցաւելուց յետոյ՝ նա երբեմն չուռ էր գալիս միւսի վրայ, քաշելով իր թեւի տակ մուշտաքանի երբեմն ստամոքսի ծանրութիւնից բարձր ձայնով գոհտում էր, օրօրելով մարմինը և ձեռքը սրտի վրայ դնելով։

Բացի Խօջա Անձրևից, ճաշի ժամանակ սպասաւորութիւն էին անում մատուցահաս օրիորդները և անմեղ մանուկները։

Շահ-Աբասը այս անգամ վճռած չըուեց գիւղին, միայն հրամայեց մի քանի իր հաւանած օրիորդները և մանուկները վերցնել իր երկսեռ հարեմի համար։ Ըզնաչելով ծնողաց լաց ու կոծին՝ սարսափելի հրամանը կատարեցաւ։ Այդ օրը Շահ-Աբասը մնաց Ցղնայում և՝ իր զօրավարներին մի քանի կարգադրութիւններ անելով, պատրաստուեցաւ միւս օրը գնալ Ագուլիս։

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՄԱՆԵԱՆ

(Վերջը միւս անգամ)

Թ Ա Խ Ի Ծ

Թողէք ինձ հանգիստ.. էլ ուրախ ղէմքեր՝
Ինձ չեն զարմացնում՝ քաղցրածայն երգեր...
Մի ծայն գուշակում է դառնագոյն վիճակ,
Անողոք քախտը սկիտ տանջէ անյագ...
Եւ իմ նազելուս անուշիկ աչեր՝
Թախիծ են սիրում՝ նրա զգւանքները...
Թողէք ինձ հանգիստ, թողէք ինձ մենակ.
Ձեն, չեն ինձ հարմար մանիշակ, սոխակ...
Ես խնդութեան մէջ սիրտ լամ իմ օրեր,
Հոգում սիրտ թաղեմ այրող արցունքներ...

ՍՐՊՈՒԴ

Ր Օ Զ Ա Ն Դ

(ՕՍՏՐԱԳՕՐԿՈՒՅ)

I

Դ Ա Ի Ա Ճ Ա Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ամբողջ եօթը տարի է, որ կուռւմ է Խալանիայում Կարլոս մեծ Թագաւորը։ Անցել է նա ամբողջ երկրով մի ծայրից մինչև միւսը, յաղթել է նա նրան ամբողջապէս՝ մի ծովից մինչև միւս ծովը, յաղթել է բոլոր քաղաքները և աշտարակները, բոլորը, բացի Սարակոսս քաղաքից։ Իսկ Թագաւորում էր այդ քաղաքում սարացինների անհաւատ Թագաւոր Մարսիլը։ Աղօթում էր նա ոչ Աչմարիա Աստուծուն, այլ իր մարգարէ Մահամմեդին, որոգայթները էր լարում քրիստոնեաների դէմ. ինչպէս երևում էր բարի վախճան չէ ունենալու Մարսիլ Թագաւորը։

Նստած է Մարսիլը կանաչ ձիերեկների տակ՝ մար-

մարմնեայ սրահի վրայ և խօսակցում է իր եղբայրների հետ. „Տէք ինձ խորհուրդ, փորձած և խելօք տղամարդիք... Ինչ կերպ վարուինք մենք Կարլոսի հետ, ինչ կերպ ազատենք մենք նրա ձեռքից մեր Սարակոսը, կառնի մեծ Թագաւորը նրան, պալատներն ու աշտարակները հիմքից կայրի, իսկ մեզ ամենքիս անողորմ մահով կրգատի“։

Բոլորը լուռ էին, միայն մէկը՝ փորձած Բլանկանդրինը ասում է Թագաւորին.

—Մի վհատիր... Ահա քեզ իմ խորհուրդը։ Ուղարկիր Կարլոսի մօտ պատգամաւորութիւն։ Նա հպարտ մարդ է, սիրում է յորգանք։ Հաւատացրու նրան պատգամաւորների միջոցով՝ երբ Թէ դու խոնարհել ես, պատրիր նրան Թանգագին ընծաներով, առիւծներով, արջերով, սովորցրած Թագիներով. ուղարկիր հազարաւոր որսորդական բազէները, յի կառք ոսկի և Թող ասեն պատգամաւորները. „Մեծդ Կարլոս, բաւական է որքան դու պատերազմեցիր, ժամանակ չէ արդեօք ձեզ Ֆրանսիա դառնալու։ Իսկ մեր Թագաւոր Մարսիլը ընդունում է քո իշխանութիւնը իր վրայ և նշանակած օրը ինքը անձամբ կըգայ քո մայրաքաղաքը—քրիստոնէական հաւատի օրէնքները ընդունելու, իսկ եԹէ չես հաւատում—կրտանք քեզ և պատանդ“։ Յետ կրգառնայ Կարլոսը իր Ախէնը, իսկ մենք կրկաբենք Նրան։ Թող սպասի նշանակած օրը մեր գալստեանը, և երբ չենք յայտնիլ՝ Թող մեր պատանդների գլուխները սրի մատաղ անի։ Աւելի լաւ է մեռնեն մեր որդիները, քան Թէ մենք կորցնենք մեր գեղեցիկ Խալանիան, որը ձեռք ենք բերել մեր արեան գնով։

Լսեց անհաւատ Մարսիլը սպիտակամազ Բլանկանդրինի առողջամիտ խորհուրդը, կատարեց բոլորն այնպէս, որպէս ասում էր Նա։ Եւ Ճանապարհ ընկան պատգամաւորները՝ ոսկով և արծաԹով զարդարուած սպիտակ ջորիների վրայ՝ տանելով իրանց հետ Թանգագին ընծաները և պատանդները։ Եւ եկան պատգամաւորները կարգով քաղաքը՝ ձեր կայսեր Կարլոսի մօտ։

Մի տաք օր էր։ Կանաչ, բազմաթիւ ծառերի ստուերների տակ՝ շրջապատուած իր տանն և երկու պիէրների, բազմաթիւ յայտնի ասպետներով՝ Ֆրանսիացոց երկրի հարազատ զաւակներով՝ նստած էր կայսրը։ Ասպետները նստած էին կանաչ խոտի վրայ փռած արևելեան գեղեցիկ գորգերի վրայ։ Ինքը Կարլոսը բազմած էր գուտ ոսկուց ձուլած բազկաթոռի վրայ. սպիտակ և Թաւ էր՝ հզօր Թագաւորի երկար մէրուքը, Ճակատը լայն և գեղեցիկ, հասակը բարձր և ուղիղ, շարժուածքը վեհանձն, տեսքը վսեմ և հպարտ։ Չէր հարկաւոր ամբոխի միջին մատնացոյց անել կայսրին. ամենքը առանց դժուարութեան կրճանաչէին Նրան։ Մօտեցան պատգամաւորները Նրան, երկրպագեցին և սկսեցին կեղծաւոր խօսքերը։ Ինչպէս սովորցրել էր Նրանց Բլանկանդրինը՝ այնպէս և ասացին։

Ականջ դրեց Նրանց խօսքերին Կարլոսը, յառեց աչքերը և ձեռքերը դէպի երկինք, ցած Թողից ծեր գլուխը կրծքի վրայ, և ընկաւ մտածողութեան մէջ։ Երկար Նա նստած էր այդպէս լուռ, չէր շտապում պատասխանել պատգամաւորներին, որովհետև այդպէս էր Նրա մշտական սովորութիւնը, ասես բարձրացրեց դէպի վեր լայն Ճակատը և հպարտ նայելով պատգամաւորների վրայ՝ ասաց.

—Խելօք են քո խօսքերը, բայց քո Թագաւորն իմ անհաշտ Թշնամին է։ Ո՞վ կրլինի ինձ համար երաշխաւոր, որ Նա չէ ստում։

Այն ժամանակ պատգամաւորներն ասացին պատանդների մասին։

—ԵԹէ այդպէս է՝ Մարսիլը դեռ կարող է ազատել, ասաց կայսրը, և հիւրասիրաբար հրամայեց պատրաստել առանձին վրան պատգամաւորների համար, ցոյց տալ Նրանց գիշերելու տեղը, իսկ ջորիներին ախոռ տանել։

Միւս առաւօտը կայսրը զարԹնեց ամենից վաղ. Ներկայ եղաւ առաւօտեան աղօԹքին, Ներկայ եղաւ ևս օրւայ աղօԹքին, Նստեց տերևախիտ սօսենի ստուերի տակ, հրամայեց կանչել իր մօտ բոլոր բարոններին և սկսեց Նրանց հետ խորհրդակցել. առանց իր հաւատարիմ Ծառաների խորհրդին Նա ոչինչ չէր անում։ Երբ պատմեց Նրանց կայսրը այն ամենն՝ ինչ առաջարկում էր Մարսիլը—բազմութեան մէջ բարձրացաւ սրտոնջ, բոլորն ասում էին, Թէ եթէ Մարսիլը որ և է չար բան է սկսում։

Եւ բարձրացաւ ամենից առաջ եպիտասարդ ասպետը՝ Կարլոսի եղբօրորդի Ռոլանդը և սկսեց խօսել այսպէս. „Մի հաւատար, Թագաւոր, այդ անհաւատի ոչ մի խօսքին։ Նա քեզ քիչ անգամ չէ խաբել։ Ցիշո՞ւմ ես, ինչպէս Նա ուղարկել էր քեզ մօտ տասն և հինգ հազարից բաղկացած մի գունդ խոնարհութեամբ, բոլոր զինուորները բռնած ունէին ձեռներին ձիԹենիների ճիւղեր և բոլորը երդուեցան, որ այլևս Մարսիլը հաւատարիմ կրլինի քեզ։ Քո խորհրդականները հաւատացին սուտ խոստումներին, դու ականջ դրիր քո խորհրդականներին—հաշուեցար Նրա հետ, ուղարկեցիր Նրա մօտ պատգամաւորներ՝ երկու յարգելի կոմսերի, իսկ յիշո՞ւմ ես՝ որպէս վարուեց Մարսիլը Նրանց հետ. Նա հրամայեց գլխատել Նրանց։ Չէ, Թագաւոր, մի ընդհատիր պատերազմը, տար քո զօրքը ուղղակի Սարակոսը և վրէժխնդիր եղիր Մարսիլից քո Ֆրանսիացիների Թափուած արեան համար։

Ահռելի կերպով խոժոռեց իր դէմքը կայսրը, սկսեց ոլորել իր սպիտակ բեղերը՝ չասելով ոչ մի խօսք իր եղբօրորդուն։ Բոլորը նոյնպէս լուռ էին։ Բարձրացաւ այն ժամանակ դորգի վրայից լուրկացոտ և չամառ ասպետ Գանելոնը, սկսեց գոռոզաբար ասել, որ չըլսէ Կարլոսը իր խորհրդականներին, այն հպարտներին և չիմաստներին, որոնք իրանց անխելք հպարտութիւնից գրգռւած՝ խորհուրդ են տալիս ուղարկել Մարսիլին մերժումն,—այլ լսէ իրան՝ ընդունէ Մարսիլի ուղարկած պատանդները և Նրա խոնարհութիւնը։ Բարձրացաւ այդ ժամուն իր տեղից վսեմախօսլ և սպիտակամազ դուքս Նէյմսիլին։ ‘Իա մի վհատահեղ , անվախ և ձշմարիտ մարդ էր։ Պատանեկութիւնից սկսած մինչև խոր ծերութիւնը Նա բաժանել էր իր ինքնահաւ տերոջ հետ պատերազմի բոլոր չարքութիւնները և վորձանքները։ Նա նոյնպէս մեացաւ Գանելոնի մտադրութեան հետ։ „Քեզ համար մեծ յանցանք կրլինի, ասաց Նա. եԹէ դու չըխզճաս չարքաւածներին։ Այդ ասպետական գործ չէ, եԹէ ոտի տակ ընկած և խոնարհաբար ողորմութիւն աղերսող Թշնամուն ջնջես։“ Եւ բոլոր ասպիտանները միաձայն աղաղակեցին. „Նա արդար է“...

Ցօժարեց կայսրը և ասաց.—Սակայն ձեմ ուղարկենք Մարսիլի մօտ պատգամաւոր։

Առաջին ցանկութիւնն յայտնեց գնալու Ֆէր Նէյմսկի դուքսը, բայց կայսրը չըվճռեց ուղարկել իր հին, անբաժան ընկերոջը։ Ցանկութիւն յայտնեց գնալու Բօլանդը, բայց նրա ընկերը Օլիվիէն նկատեց, որ այդպիսի գործի համար նա չափազանց հպարտ է և անչափ տաք բնաւորութեան տէր՝ և այդ պատճառով կարող է աւելի դրգռել Մարսիլին. նա ցանկութիւն յայտնեց ինքը գնալու։ Կայսրը չըհամաձայնուեց և լուռ էր։ Շուրջն ամենքը նոյնպէս լուռ էին։ Յանկարծ լսուեց Բօլանդի ձայնը. „Թող գնայ իմ խորթ հայր Դանելոնը։ Նա վորձառած մարդ է, կարող է վորձառու կերպով կատարել այս չանճանաբարութիւնը“։

Մռայլուեց Դանելոնի դէմքը։ Կարմրելով և բոլորովին դողալով բարկութիւնից՝ վեր ցատկից նա գորգից և, աչքերից կայծակ թափելով, նախատել Բօլանդին.

—Ի՞նչ ես առաջարկում դու, անխելք։ Դու ուղարկում ես ինձ մահի գիրկը, ինձ՝ քո խորթ հօրը։ Ուրեմն յիշիր՝ եթէ ես կենդանի դառնամ Սարակոսից՝ ես քեզ հետ իմ հաշիւս կըտեսնեմ։

—Անխելք մի գոռալ, ընդմիջեց նրան Բօլանդը։ Ինչ բարկութիւնը ինձ համար սարսափելի չէ... Մեզ հարկաւոր է ուղարկել Սարակոսը վորձառու և յարմար պատգամաւոր, եթէ դու չես ցանկանում գնալ՝ կըգնամ ուրախութեամբ ես...

—Ինչից վերցրիր դու, թէ ես կըընդունեմ քո ծառայութիւնը, բացականչեց Դանելոնը։ Եթէ կայսրը կը հրամայէ՝ կըգնամ ես ինքս։

Նայեց Բօլանդը բարկութիւնից դողդողող Դանելոնի վրայ և ծիծաղեց բարձրաձայն։

—Ուրեմն յիշիր, բացականչեց կոմս Դանելոնը դուրս նետուելով։ Դու ինձ կորուսիր ես ուղարկում. մի սպասիր երկնից ոչ մի բարութիւն։

Եւ գլուխը հպարտ բարձրացնելով՝ նա անցաւ ժողովի առաջ և ասաց. „Կայսր... պատրաստ եմ կատարելու ամենը, ինչ որ դու հրամայես։ Հրամայիր՝ և ես այս րոպէիս ճանապարհ կընկնեմ անօդորմ Մարսիլի մօտ, թէև գիտեն ամենքը, որ կենդանի չի վերադառնալ նա, ով նրա ձեռքը ընկնի։ Բայց յիշիր, Կարլոս, որ ես քո քրոջ ամուսինն եմ, որ ես ունիմ նրանից մի որդի, քո հարազատ քրոջ որդի, քո արիւնդ, իմ Բոդուէնը... Նրան եմ թողնում իմ բոլոր հողերը և կալուածքները... Պահպանիր նրան, իսկ ես այլևս չեմ դառնալու։

—Ժամանակ չէ դրա մասին մեզ խօսելու, ընդմիջեց նրան կայսրը։ Մօտեցիր ինձ և համեմատ մեր հին սովորութիւններին՝ ի նշան նրան, որ ես տալիս եմ քեզ պատգամաւորութեան ժամանակ իմ սեփական նուիրիւնը՝ սասպիր ձեռքիս իմ ձեռնոցը։ Քեզ ընտրել է բոլոր Ֆրանսիան և իմ կամքս այստեղ թոյլ է։

—Ձշմարիտ չէ, կայսր. ինձ ընտրել է Բօլանդը, որին այժմեանիկ ընդ միշտ թշնամի եմ դառնում։ Իմացած եղիր, որ ես առում եմ և՛ սրան, և՛ Օլիվիէին, և՛ քո բոլոր շրջապատողներիդ, որոնք նայում են քո եղբորորդու աչերին և չեն համարձակվում ոչ մի խօսք արտասանել։ Ես կըգնամ Սարակոս, բայց կըգնամ միայնակ, որպէս այն երկու անբասիր պատգամաւորները, որոնց դու ուղարկել էիր Մարսիլի մօտ մորթելու։

Կայսրը հանեց ձեռնոցը, որ յանձնէ պատգամաւորին, բայց որովհետև այդ րոպէին Դանելոնը կանգնած էր Կարլոսից հեռու և չըկամ մեկնեց իր ձեռքը՝ ուստի ձեռնոցը ընկաւ գետնի վրայ։

—Զար նշան է, լսուեց նրա շուրջը։ Պատգամաւորութիւնը անբախտութեամբ կըվերջանայ։

—Եւ ձեզ համար դա չիշեցի կըլինի, ասաց պատգամաւորը՝ բարձրացնելով ձեռնոցը։—Կայսր, շարունակեց նա, դու ուղարկում ես ինձ դժւար պատգամաւորութեան—ուստի արձակիր քո ծառայից պատուով և խաղաղութեամբ։

Եւ Թագաւորը՝ ընդհանուր լռութեան մէջ՝ կանգնեց իր վիճակակալի առաջ, խնչակնքեց նրան և հանդիսաւոր կերպով յանձնեց նրան պատգամի հետ Թագաւորական կնիքը։

Դանելոնը պատրաստուեց ճանապարհ ընկնելու. նա հագաւ երկաթեայ զրահները, կապեց սերթը, կապեց ոսկեայ խթանները, նստեց պատերազմական ձիու վրայ և կտակելով իր վիճակակալներին լաւ պահպանել իր փոքրիկ որդուն, խնդրելով, որ բարև տան իր սիրելի կնոջ և իր հին ընկերոջ՝ քաջ Պենաբելին՝ ճանապարհ ընկաւ Սարակոս։

(Շարունակելի)

փոխանակութիւն

Նահանջ տարին շարունակում է իր ազդեցութիւնը.—Լօյերան Պարկաստանից անցնելով Անդրկասպեան երկրով արգէն ներս է մտել և Անդրկովկաս։ Պաշտօնական ամեն օր Բագուի, Դանձակի նահանգապետները մանրամասն պեհուցումներ են հաղորդում խօլերայի ընթացքի մասին։ Բագուում մինչև վերջին օրերը խօլերայով հիւանդացողների թիւը հասնում էր հազարի։ Մեռնողների թիւը աւելի շատ է, քան առողջանողներինը։ Բագուի հիւանդանոցում վերջին շաբաթ տեղ չըլինելու պատճառով մի հիւանդի անզօր են եղել ընդունելու։

—

Բագուից ոչ լինչ կերպ կարողանում է՝ վախչում է։ Անցեալ շաբաթ մի Էրեկոյ Բագուի երկաթուղու կայարանում ծախսած է եղել 4500 ր. տոմսակ, վագոններում ոչ մեկին նստելու, այլ նոյն իսկ կանգնելու տեղ չի եղել, այնպէս որ գնացողներից ոմանք տեղատուրիւ են վագոնների կուռերին, սանդուղքների վրայ։

Մի այլ երեկոյ գնացողների թիւը այն աստիճան շատ է եղել, որ հազարհոգիները տեսնելով, որ նրանց տոմսակ չի հասնելու, նոյն երեկոյ յարձակուել են կասսի վրայ և տոմսակները յափշտակել։

Անզօր կանայք չըկարողանալով նրանց հերթին սպասել, որպէս զի տոմսակ առնեն, գնացել են երկաթուղու գծերը վրայ նստել և առաջարկել կամ նրանց քաղաքից դուրս տանեն գոնէ մի երկու կայարան և կամ թէ թողնեն գնացքը նրանց վրայ՝ անցնէ։

—

Բագուի բնակիչները կխոց աւելին արգէն թողել են նրանց քաղաքը և հեռացել։ Մեծագոյն մասը նրանցից գնացել է Շուշի քաղաքը և Ղարա-

Հոլյանդացիք

քաղու Ջանգեազուրի գիւղօրայքը։

—

Նէլախ կայարանում, որտեղից արդէն սկսում է Շուշայ դեղեցիկ լեռնաշղթին՝ գնացողները Թիւրը դէպի Գարաբաղ այն աստիճան շատ է, որ միօտով գնացողները որպէսզի ստիպուած չլինեն շաբաթներով սպասել, գնում են լինչ կերպով կարողանում են՝ ազատ կառքերով, որ սովորական գնից չորս-հինգ անգամ այժմ թանգ է (60—80 ր.)։ Ֆուրգոնը, որ տանում էր մինչև Շուշի 2 ր. այժմ առնում է մի հոգուց 10 ր.։ Դոմէշի սայլերով, ձիով, ոտով, մի խօսքով ամեն հնարաւոր միջոցով աշխատում են կարելին չափ շուտով հեռանալ Նէլախից, որովհետև այնտեղ ճահճային լինելով, մի օր մնացողը ստանում է ջերմ-տենդ։

—

Բագուից վերադարձողները երանց հետ խօսելուն տալել են և Շուշի, ուր նոյնպէս սկսել են դէպքերը խօլերայից մեռնողների։ Պաշտօնապէս վարակուած են համարւում Բագուն, Գանձակի և մասամբ Թիֆլիսի նահանգները։ Կառավարութիւնը, քաղաքային վարչութիւնները կարևոր միջոցներ գործ են դնում հիւանդութեան տարածմանը դիմադրելու. մեծ ջանքերով հիւանդներին խնամում են, աղքատ դասակարգին ամեն տեսակ խնամք տանում են, որ չվարակուեն։

—

Գրականութիւն

Շնորհակալութեամբ ստացանք Գուստաւ Վագա դերբույկը, բառական լաւ թարգմանութեամբ, գինն է 5 կ. տպւած է Մոսկւա. 1892 թ.։

—

Ստացանք Կ. Պօլսից իրական կեանքի նուագներ՝ Մկրտիչ Յովհաննէսեանի ոտանաւորների գրքոյկը, 52 երես, չքեղ տպագրութիւն, երեք պատկերով։ Ոտանաւորներից մի քանիսը լաւ են։

—

Խմբագրութեանս մէջ ստացուեցաւ „Թաւմա Սիմոնեցու յիշատակարանը“, հրատարակեց իր յառաջաբանով Կ. Կոստանեանց. միջադիր, 88 երես. գինն է 25 կոպէկ։ Տպւած է Յ. Մարտիրոսեանցի տպարանում։

—

Թղթակցութիւն

Մեծ քաղաքների վերացած ատմոսֆերայում նստակեաց աշխատաւորի համար՝ „ֆիզիքական“ անհրաժեշտ պարապուրքութիւն է ամառը մի՝ գէթ կարճ միջոցով՝ գիւղագնացութիւնն անել. այս պարագան էս աւելի բարերար ազդեցութիւն է անում մտաւոր զբաղմունք ունեցողների վրայ։ Յունիսից Թիֆլիսում սկսեցին անտուող գալկացուցիչ շոգերը, տաք, փոշի բարձրացնող քամիները. այս ամենը չզային տագնապ էր առաջացնում քնակիչների մէջ, որոնք առանց այդ էլ զրգռւած դրութեան մէջ էին վերահաս մահտարաժամի բոթի պատճառով և գլխիվայր, տնտամած թափառում էին փողոցներում։ Երկաթուղու կէսօրւայ գնացքում, որ գնում է դէպի Ղարաբաղ՝ ամբոխ և երթևեկում չկար. Բագուի վրայ գնացող վագոնները գրեթէ դատարկ էին...

Ընդհատ Կարայեազի տապին. ազատ օդը և գնացքի հոլը զարթուցում էր քաղաքից մեկնողներին։ Աղստևի փոստայինն նկատում ուղեւորներին շատ-շատ լուր եւ ինչ հանդարտ են գնում, նոյն տպրով, որ բազմութիւնն չվրատակի այստեղ. այդ պատճառով մի ձին օրը երեք, չորս անգամ դուրս է գնում, ուստի ձիերը նիհար են և չեն կատարում է շատ պանդուխ։

Առաջին տարիները Թիֆլիսի գնացքը ժամանում էր Աղստևի կայարանը գիշերւայ ժամը 3-ին. Ճանապարհորդներն էլ գնում էին դէպի Վիլիջան ցերեկով, որ ամառը շատ էլ հաճելի չէր, այժմ գնացքը գալիս է ցերեկւայ 5-ից կէս պակաս. ուղևորները հազիւ մինչև Ղազախ նոր ատանը լուսով են գնում, այնուհետև ուղին շարունակում են գիշերւայ զովութեամբ, որ շոգ ժամանակին թեթևացնում է գիշերւայն Ճանապարհորդութեան անյարմարութիւնը և նեղութիւնը։

Ղազախը մի նոր հիմնւած քաղաք է, որին դեռ ոչ մի վայլուն ապագայ չի կարելի գուշակել. ոչինչ արդիւնաբերութիւն չկայ այստեղ. սա մի վաղչական աւան կամ կեդրոն է. շրջապատը լիքն է խաւարային, աւազակաբարոյ Թուրք գիւղերով, որոնք ամառը դաստակրւում են, որովհետև բնակիչները չեւում են լեռների բարձր լանջերը ևրանց անասունները արածացնելու համար. նրանք հողագործանասնապահ են, սակայն շատ սահմանափակ, անշարժ, յառաջադիմութեան ոչ մի նշոյլ չկայ մէջները։ Այնուամենայնիւ Ղազախի քրիստոնեայ բնակիչները ամեն կերպ աշխատում են բարելաւել իրանց նոր քաղաքը. երկու տարի առաջ անկել են մի գեղեցիկ հասարակական զբօսարան-այգի. իսկ այս տարի ուժ հազար րուբլի ծախսելով լեռների կողմից տաններիս վերայ հեռաւորութիւնից կաւէ խողովակներով բերել են մինչև աւանի կեդրոնը աղբիւրի խմելու լաւ ջուր։

Աղտաճի տափարակում հունձը մի երկու օրից յետոյ բոլորովին կվերջանայ։ Այս տարւայ բերքը շատ յաջող կարելի է համարել։ Լեռներում դեռ հասկ էլ չի գցել. խոտը նոր է հնձւում։

Գեղարքունիքում և Ծաղկաձորում սաստիկ չորութիւն է. ժողովուրդը թափորներ և ցասման ժամ-պատարագ է անում, որպիսին և տեղի ունեցաւ կիրակի, յունիսի 14-ին Նոր-Բայազիդում. եթէ շուտով անձրև չը գայ, շատ գէշ կլինի այդ գաւառների ժողովրդի անտեսական վիճակը։

Բաւականաչափ գիւղի փոսակ իջեւանում հաղորդեցին, որ Ներսիսեան դպրոցի հայասփւռոր տաները այդտեղ են իրանց դաստիարակի հետ, պարտում են ոտով հայաբնակ գիւղերը, հայ վանքերը և հնութիւնները. փոքրահասակ աշակերտները փուրգունով գնացել են Դիլիջան։

Լուսադէմին ժամանեցինք այս առողջարար ամարանոցը. զով օդ, ակնառատարած և կանաչազեղ տեսարանները, սառն և վճիտ աղբիւրի ջուր. շրջակայ լեռների գագաթներին դեռ երևում են ձիւնի խոշոր շերտեր, որ սովորական չէ այստեղ յունիսի արդէն երկրորդ կիսի համար։ Նկատւում են այլ ևս մի քանի նոր կառուցւած դրեղ ամարանոցներ. շուտով Դիլիջանի գլխաւոր փողոցի վրայի հին և անճոռնի չէնքերի հեռքն անդամ չի մնալ։ Ամարանոց եկողները թէպէտ շատութեամբ աչքի չեն ընկնում, բայց և այնպէս բնակարաններըը լաւ գնով են վարձում. օրիորդական դպրոցի չէնքը երեք ամսւայ համար տրւած է 200 ր. վարձով, թէպէտ յետոյ 300 ր. տուղ էլ է գանւել։

Տղայոց դպրոցի չէնքը վարձել է 60 ր. Ներսիսեան դպրոցի փոքր տաների համար. աշակերտները պետւած են դպրոցի ցածր մեծ սենեակում. քնում են մի ընդհանուր երկար թախտի վրայ, անկողիններն իրար կպած. նեղւածկութիւն և անյարմարութիւն։ Բացի դրանից վերակացուն ամբողջ օրը երեխաներին փակած է պահում. խեղճերը դեռ ոչ անտառումն են եղել և ոչ էլ լողանում են. մի քիթ այդ վերակացուին հրահանգ չեն տւել։

Ն. Տ. Ա.

Աստրախան, 15 յունիսի

Կրթական գործն Աստրախանում բաւականին առաջ է գնացած։ Մենք ունինք հետևեալ ուսումնարանները՝ Աղաբաբեան (տղայոց) 78 աշակերտով, Արհեստական 17 աշ., Ծխական 19 աշ., Օրիորդաց դպրոց 12 աշակերտուհով։ Բացի վերոյիշեալներից և չը հաշւելով մի քանի մասնաւոր ուսումնարաններում մեր հայ աշակերտները, երկու գիմնազիոններում ուսանում են՝ տղայոց 48 աշ. և օրիորդաց 30 աշ., ընթերական դպրոցում 58 աշ., և քաղաքային ուսումնարաններում 50-ի չափ աշակերտ։

Այդպիսով մեր հասարակութիւնն իւրաքանչիւր տարի տալիս է մինչև 400-ից աւելի աշակերտ և աշակերտուհի։ Աստրախանի հայերն ունեն և աշակերտները Մոսկւայի Լազարեան Ճեմարանում, ուսանողներ համալսարաններում և նոյն իսկ արտասահմանում։ Եւ եթէ ի նկատի ունենանք, որ հայերի թիւը, այստեղ հազիւ 6000-ի հասնում, մենք կը տեսնենք, որ հայերն Աստրախանում ուսման գործը լաւ են հասկացած ու ըմբռնած։ Ճշմարիտ հազիւ մի մարդ կը գտնէք Աստրախանում մինչև մինչև հասակը, որ նա լինի անգրագէտ։ Մեծ մասը գրանցից Աղաբաբեան դպրոցից և օրիորդաց գիմնազիոնից են։ Սակայն չեն համալսարանականները։

Բայց չը նայելով, որ կրթական գործն Աստրախանում այդքան առաջ է գնացած, այնուամենայնիւ մեր հասարակութիւնը մի առանձին օգուտ այդ կրթւած երիտասարդներից մինչև օրս համարեա թէ չի տեսել։ Ամեն մէկը անտարբեր է դէպի առաջեայ խնդիրները, դէպի ազգայինը, դէպի հայ գրականութիւնը, լրագրութիւնը և այլն։ Բոլորովին չը հետաքրքրւելով այդպիսի խնդիրներով, սրանք մտածում են միայն իրանց և իրանց շորի վրայ։ Իսկ դաստակարգի խորութիւնը համարեա նոյն դրութեան մէջ է, ինչ որ 50 տարի առաջ։ Օրինակ՝ դիցուք մի ուսումնարանում ուսանում են հարուստ և չքաւոր մարդու զաւակներ։ Աւարտելուց յետոյ այդ հարուստ տղաների տղաները ոչ թէ չեն շրխուում, չեն հրաւիրում իրանց մօտ իրանց չքաւոր դասընկերներին, այլ պատահած ժամանակ, աղայական գոռոզութեամբ երեսները շուռ են տալիս և չեն բարևում անգամ։

Այդ երևոյթն այնքան ցաւալի է, որքան ցաւալի է անկրթի հասարակութիւն ունենալը։

Ցանկալի է որ մեր երիտասարդութիւնը հետաքրքրւէր ժամանակակից խնդիրներով, հայ գրականութեամբ, հայ լրագրով և հայ կեանքով։ Եւ որպէս զի մեր երիտասարդ դաստակարգը հասնի ցանկալի ինքնաճանաչութեան, մեր կարծիքով, Աստրախանում անհրաժեշտ է կազմել երիտասարդների մի ընկերութիւն կամ շրջանները երիտասարդների, մանաւանդ նորաստեղ երիտասարդների մէջ տարածելու համար ընթերցասիրական սէր և հետաքրքրութիւն դէպի առաջեայ հարցերը. հարկաւոր է ցոյց տալ նրանց, որ բացի շորից և իրանց վրայ մտածելուց՝ մարդուս պարտականութիւնն է մտածել և ընկերի վրայ։

Ս.

Սուրհանդակ

Սարիղամիշ. Նոր. Զիլինգ. Ձեզ ուղարկում ենք այս հասցէով՝ Сарикамышъ Бр. С. и Х. Чилингар. въ Карапургань, ստանում էք, թէ ոչ։

Գետաշէն. Ա. Թ. Ձեր բնտրութիւնները մեծ մասամբ յաջող են լինում, ուղարկեցէք կրկարդանք։

Յարսկ.Սնլ. Գ. Ա. Ձեր յանձնարարութիւնը կատարեցինք։

Մարաղա. Ալ. Դ. Ինչ կարիք կայ թատիզ ուղարկելու, ուղարկեցէք մեզ եւ նամակ գրելուց առաջ մենք անգամ կը-կնեցէք ձեր այն հասցէն, որով ուղարկում է ձեզ մեր թերթերը, հակառակ դէպքում, ձեր նամակները մնալու են առանց տնօրէնութեան։

Խմբ.-Հրատ. Տ. Նազարեան.

ՏՊԱՐԱՆ „ԱՐՏԱՐ" Տ. ՆԱԶԱՐԵԱՆ. Дoз. Ценз. Тифлисъ. 19-го іюня 1892 г. Тип. Арарат. Г. Я. Назарьянъ, Бакинск. у.д.